ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱՅՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ Վ. Ա.

Հայաստանի քաղաքական փոխակերպումների գործընթացը որոշակիորեն պայմանավորված է Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) շրջանակում իրականացվող գործունեությամբ: ԵՀՔ համատեքստում ժողովրդավարական սկզբունքների հաստատումը պահպանվում է ինստիտուցիոնալացման միջոցով: Եվրոպական հարևանության քաղաքակա-նությունը, որի նպատակներն են Եվրոպական միության (ԵՄ) և հարևան երկրների համագործակցության ամրապնդումն ու անվտանգության ապահովումը, Եվրոմիության նոր մոտեցումն է հարևան երկրների հետ հարաբերություններում: Այն ենթադրում է անվտանգության, տնտեսության և մշակութային ոլորտներում հարևան երկրների համագործակցության հնարավորությունները Եվրոպական միության հետ ընդլայնելու, փոխհամագործակցությունը խորացնելու քաղաքականություն:

Հարևանության քաղաքականության մշակման նախադրյալ դարձավ ԵՄ-ի 2003 թ. ընդլայնումը, որը կարևոր քայլ էր ոչ միայն Միության սահմանների ընդարձակման, այլ նաև Եվրոպայում բարեկեցության ու անվտանգության ամրապնդման ճանապարհին: Այս հանգամանքները նոր հնարավորություններ ստեղծեցին և առաջ քաշեցին նոր խնդիրներ: Հավատարիմ մնալով եվրոպական արժեքներին ու սկզբունքներին՝ նոր ծրագիրը կարևորում է հարևան երկրներում՝

• քաղաքական, տնտեսական ու հասարակական ոլորտներում բարեփոխումների ընթացքը և արդյունքները,

• կայուն ու բարենպաստ տնտեսական միջավայրի զարգացումը:

Եվ եթե առաջինը կապվում է ուղղակի ԵՄ անվտանգության ապահովմանը, երկրորդը դիտվում է որպես աջակցություն նաև ԵՄ բարգավաճմանը: Այսպես, կարելի է ենթադրել, որ աջակցելով հարևան երկրներում բարենպաստ տնտեսական պայմանների ստեղծմանը՝ ԵՄ-ն փորձում է լուծել վերջին տարիներին մեծ թափ ստացած ներգաղթի հիմնախնդիրը:

2001 թ. սեպտեմբերի 11-ի դեպքերը դրդապատճառ եղան 2003 թ. դեկտեմբերին Եվրոպական խորհրդի կողմից «Եվրոպայի անվտանգության ռազմավարությունն» ընդունելուն: Այս փաստաթուղթը փորձ էր վերահիմաստավորելու XXI դարում Եվրոպայի առջև ծառացող վտանգները (ահաբեկչություն, զանգվածային ոչնչացման զենքի տարածում, տարածաշրջանային բախումներ, կազմակերպված հանցագործություն և այլն) և անվտանգության ապահովմանը վերաբերող մոտեցումները: Փաստաթղթում մասնավորապես նշվում է. «Աշխարհագրությունը չի կորցնում իր նշանակությունը անգամ գլոբալացման դարաշրջանում: Եվրոպան հետաքրքրված է իր սահմանների մոտ ժողովրդավարական նորմերով կառավարվող երկրներ ունենալով: Հարևան երկրներում դաժան կոնֆլիկտների առկայությունը,

զարգացող կազմակերպված հանցագործությունը, անառողջ հասարակությունը կամ բնակչության անկառավարելի աճը Եվրոպայի համար նոր խնդիրներ կարող են առաջացնել: Նոր միացած երկրների ինտեգրումը ամրապնդում է մեր անվտանգությունը, բայց և ԵՄ սահմանները մոտեցնում է վտանգավոր գոտիներին: Մեր նպատակն է նպաստել ԵՄ-ից արևմուտք և Միջերկրական ծովի սահմաններում լավ կառավարվող երկրների շրջան ստեղծելուն, որոնց հետ մենք կկարողանայինք սերտ հարաբերություններ հաստատել համագործակցության հիմքի վրա»[1]: Այսպիսով, ԵՀՔ-ն որպես գլխավոր նպատակ է ընտրում աջակցությունը հարևան երկրներում ժողովրդավարության ամրապնդմանը և սոցիալ-տնտեսական դաշտի զարգացմանն ուղղված բարեփոխումներին:

Գործընթացի քաղաքական սկզբունքներ ճանաչվեցին գործընկերությունը և մասնակցությունը: Այդ շրջանակներում բարեփոխումների գործընթացը կատարվում է կողմերի պայմանավորվածությամբ ստեղծված Գործողությունների ծրագրերի միջոցով, որոնք բխում են տվյալ երկրի կարիքներից ու ձգտումներից: Հաստատվում են հիմնախնդիրների առաջնայնությունների վրա հիմնված կարճաժամկետ ու միջնաժամկետ բարեփոխումների ծրագրեր: Դրանցում ընդգծված քաղաքական հիմնախնդիրների առաջնայնությունները հետևյալն են.

1. քաղաքական երկխոսություն և բարեփոխումներ,

2. համագործակցություն արդարադատության, ազատությունների և անվտանգության ոլորտներում,

3. մարդկային չափում, հատկապես քաղաքացիական հասարակություն, կրթություն, առողջապահություն:

ԵՀՔ գործողությունների ծրագրերի առանձնահատկություններից են դրանց՝ յուրաքանչյուր կոնկրետ երկրի կարիքներին, քաղաքական, տնտեսական ու սոցիալական իրավիճակին համապատասխանեցնելը և տվյալ երկրի հետ այդ ծրագրերը քննարկել ու համաձայնեցնելը:

Քաղաքական ոլորտի ծրագրերը ԵՀՔ շրջանակում կատարվում են քաղաքական ինտեգրման խորացման ուղղությամբ, ինչը նշանակում է առավել բարձր մակարդակներում և ավելի հաճախակի տեղի ունեցող և երկխոսություններ, ինչպես նաև քաղաքական համակարգի համապատասխանեցման բարձր մակարդակ, որպես հեռահար նպատակ՝ օրենսդրական ու իրավական տարբերությունների վերացում, աջակցություն քաղաքական ինստիտուտների հետագա ամրապնդմանը, աջակցություն արտաքին քաղաքականության ոլորտում, որը ներառում է տարածաշրջանային համագործակցությունը, բազմազան կազմակերպությունների աշխատանքների արդյունավետության բարձրացումը, ընդհանուր անվտանգությանը սպառնացող երևույթների դեմ (ահաբեկչություն, ծայրահեղականություն) միասնական

---

[1] *European Security Strategy. Brussels, 12 December 2003. http://www.consilium.europa.eu/uedocs/cmsUpload/78367.pdf*

պայքարը: Բենիտա Ֆերերե-Վալդները, նշելով Հայաստանի ձգտումը բարեփոխումները խորացնելու վերաբերյալ, շարունակում է. «…հարևանության քաղաքականությունը իրապես նպաստել է Հայաստանի զարգացմանը, և այսօր մենք երկրին առաջարկում ենք խթանման առավել գրավիչ տարբերակ. քաղաքականությունը կենտրոնացնել երկկողմ հետաքրքրություններ ներկայացնող բնագավառների վրա: Մենք պետք է ձգտենք խաղաղության, տնտեսական զարգացման ու կայունության մեր հարևան երկրներում: Սրա իրականացման առավել լավ տարբերակ չկա, քան նրանց քաղաքական ու տնտեսական բարեփոխումներին աջակցելը»[2]:

Հայաստանի համար նշված բոլոր հիմնախնդիրները արդիական են և որոշիչ՝ քաղաքական փոխակերպումների գործընթացում: Մինչև ԵՀՔ անդամ դառնալը Հայաստան-Եվրոմիություն հարաբերությունները կարգավորվում էին 1999 թ. ուժի մեջ մտած Գործ- ընկերության և համագործակցության համաձայնագրով (ԳՀՀ): 2004 թ. Հայաստանն անդամակցեց ԵՀՔ-ին, և փոխհարաբերությունները մի նոր՝ ավելի բարձր մակարդակի հասան: Դրան նպաստեց նոր փաստաթղթերում ամրագրված՝ ԵՄ-ի պատրաստակամությունը ԳՀՀ-ով նախանշված բարդ հիմնախնդիրների լուծմանը օժանդակելու: Այսպես, 2005 թ. Եվրոպական համայնքների հանձնաժողովի կողմից հրապարակված՝ Երկրի զեկույցում նշվում էր, որ Գործողությունների ծրագիրը պետք է ներառի ժողովրդավարության և շուկայական տնտեսության բարեփոխմանն օժանդակելու մասին կետեր: 2006 թ. նոյեմբերի 14-ին Բրյուսելում տեղի ունեցած՝ Հայաստան-Եվրոպական միություն համագործակցության խորհրդի 7-րդ լիագումար նիստում ընդունված ԵՀՔ Գործողությունների ծրագրում ուրվագծվում են Հայաստանի և ԵՄ-ի միջև համագործակցության ռազմավարական նպատակները[3]: Հինգ տարվա համար նախատեսված ծրագրի իրականացումը պետք է նպաստի ԳՀՀ-ի դրույթների կենսագործմանը և աջակցի Հայաստանի հետագա եվրոինտեգրմանը:

Գործողությունների ծրագրի առաջնային ոլորտներն ընդգրկում են ժողովրդավարական կառույցների, օրենքի իշխանության ամրապնդմանը, կոռուպցիայի դեմ պայքարը, մարդու իրավունքները և ազատությունները հարգելուն, երկրի տնտեսական զարգացումը (այդ թվում՝ տնտեսական օրենսդրության և վարչարարության հետագա մշակումը), էներգետիկ ռազմավարության մշակումը, Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը և տարածաշրջանային համագործակցությանն ուղղված կոնկրետ առաջարկություններ ու գործողություններ[4]: Համաձայն ծրագրի 4-րդ բաժնի առաջին՝ քաղաքական երկխոսություն և բարեփոխումներ կետի, նախատեսվել են Հայաստանում ժողովրդավարությունը և օրենքի գերակայությունը երաշխավորող ինստիտուտների կայունության ու

---

[2] http://www.delarm.ec.europa.eu/arm/press/04_12_2006htm

[3] www. armtown.com/news/am/pan/20061114/2007

[4] ԵՄ-Հայաստան ԵՀՔ Գործողությունների ծրագիր, էջ 3-8 (www.armeniafo-reignministry.com/perspectives/061114_armenia_enp_ap_final_arm.doc):

արդյունավետությանն ուղղված գործողություններ: Ըստ Ծրագրի, ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդմանը կարող են նպաստել հետևյալ գործողությունները.

• եվրոպական չափանիշներին համապատասխան ամրապնդել տեղական ինքնակառավարումը՝ ներառյալ տեղական համայնքներն ու քաղաքացիական ծառայության ինստիտուտները, և ապահովել Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի կիրառումը,

• ամրապնդել քաղաքական բազմակարծություն՝ Հայաստանի և ԵՄ քաղաքական կուսակցությունների և օրենսդիր մարմինների միջև՝ համագործակցության խրախուսման միջոցով,

• հաստատել հստակ ու թափանցիկ կանոններ կուսակցությունների ֆինանսավորման վերաբերյալ[5]:

Ծրագրում քաղաքական բարեփոխումների արդյունավետությունը կապվում է նաև մարդու իրավունքները պաշտպանելու և հարգելու հետ, ինչը կարևոր նշանակություն ունի քաղաքական ինստիտուտների կայունացման գործընթացում: Ծրագիրը նախատեսում է.

• նպաստել քաղաքացիական հասարակության զարգացմանը,

• ապահովել ՄԱԿ-ի՝ Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին կոնվենցիայի լրացուցիչ արձանագրության վավերացումն ու իրականացումը,

• շարունակել ջանքեր գործադրել արհեստակցական միությունների իրավունքների և առանցքային աշխատանքային չափանիշների ապահովման ուղղությամբ՝ հիմնվելով եվրոպական չափանիշների և Միջազգային աշխատանքային կազմակերպության համապատասխան կոնվենցիաների վրա,

• ապահովել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների հարգումը,

• շարունակել ջանքեր գործադրել հասարակությունում և տնտեսական կյանքում տղամարդկանց ու կանանց հավասարությունն ապահովելու ուղղությամբ՝ «Կանանց կարգավիճակի բարելավման և հասարակությունում նրանց դերի բարձրացման» Ազգային ծրագրի իրականացման միջոցով[6]:

Եվրոհանձնաժողովը, հենվելով Հայաստանի կողմից տրամադրված տեղեկությունների վրա, ներկայացնում է Հայաստանի՝ Գործողությունների ծրագրի շրջանակում կատարած բարեփոխումների վերաբերյալ զեկույցներ, իսկ ծրագրի իրականացման առաջընթացը վերահսկվում է Գործընկերության և համագործակցության համաձայնագրով ստեղծված համատեղ մարմինների կողմից[7]:

---

[5] Նույն տեղում, էջ 8:

[6] Նույն տեղում, էջ 9:

[7] Նույն տեղում, էջ 30:

ԵՀՔ շրջանակում Հայաստանին առաջարկվում է քաղաքական, տնտեսական ու մշակութային սերտ փոխհարաբերություններ հաստատել ԵՄ-ի հետ: Այդ փոխհարաբերություններն ընդգրկում են նաև ԵՄ-ի կողմից Հայաստանին ցուցաբերելիք օգնությունը, որը ներառում է հիմնականում վարչական, իրավական և հիմնարկման ոլորտներում բարեփոխումներին աջակցելը և անցումային շրջանի սոցիալական բարդությունների հաղթահարմանը նպաստելը: ԵՄ-ն, ՏԱՍԻՍ-ի[8] ֆինանսավորմամբ, Եվրոպական քաղաքականության և իրավական օգնության հայկական կենտրոնին օժանդակում է երկրում իրականացնել քաղաքական, տնտեսական և սոցիալական զարգացմանը, ինչպես նաև կրթական բարեփոխումներին նպաստող ծրագրեր, որոնք նույնպես մեծ նշանակություն ունեն հանրապետությունում տիրող սոցիալական իրավիճակի բարեփոխման և հատկապես աղքատության հաղթահարման գործում, ինչը բացառիկ կարևորություն ունի երկրում քաղաքական ու տնտեսական բարեփոխումների և փոխակերպումների գործընթացի համար: Ավելի մանրակրկիտ դիտարկենք ԵՄ-ի օգնությունը և երկրի քաղաքական համակարգի փոխակերպման վրա դրա ունեցած ազդեցության խնդիրը:

ԵՀՔ գործընկերության շրջանակում առավել կարևորվում են համաձայնագրով ամրագրված հետևյալ բնագավառները.

• ժողովրդավարություն, օրենքի նորմեր, մարդու իրավունքներ և այս արժեքների վրա հիմնված քաղաքական ինստիտուտներ,

• տարածաշրջանային կայունություն և համագործակցություն,

• արդարադատություն և ներքին գործերի բնագավառ,

• տնտեսական և սոցիալական բարեփոխումներ, որոնք նոր հնարավորություններ կստեղծեն զարգացման և արդիականացման համար,

• առևտրի հետագա ազատականացում և հետևողական մուտք ԵՄ-ի ներքին շուկա[9]:

2008 թ. հրապարակված «Եվրոպական քաղաքականության իրականացումը 2007 թվականին» առաջընթացի զեկույցն արձանագրեց, որ Հայաստանը ԵՀՔ Գործողությունների ծրագրի որոշ բնագավառներում գրանցել է առաջընթաց: Ինստիտուցիոնալ համագործակցությունը ԵՄ-Հայաստան համագործակցության խորհրդի, ԵՄ-Հայաստան համագործակցության կոմիտեի և ԵՄ-Հայաստան առևտրի

---

[8] Technical Assistance to the CIS – Տեխնիկական աջակցություն ԱՊՀ-ին. սա այն հիմնական գործիքն է, որի օգնությամբ ԵՄ-ն օգնում է ԳՀՀ-ի իրականացմանը: ՏԱՍԻՍ ծրագիրը ստեղծվել է Եվրոմիության նախաձեռնությամբ՝ շուկայական տնտեսական հարաբերությունների անցած նորանկախ պետությունների ժողովրդավարական հասարակություններին ֆինանսական միջոցներ և արևմտյան փորձը տրամադրելու համար:

[9] European Security Strategy. Brussels, 12 December 2003. http://www.consilium.europa.eu/uedocs/cmsUpload/78367.pdf

ենթակոմիտեի միջոցով՝ երկու կողմերին էլ առաջ մղեց և հնարավորություն ստեղծեց ավելի ուշադիր հետևելու ԵՀՔ Գործողությունների ծրագրի իրականացմանը[10]:

Առաջընթացի զեկույցում ԵՄ-ն քաղաքական ոլորտում, որպես Հայաստանի հիմնական խնդիրներ, նշում է ժողովրդավարությունն ու օրենքի գերակայությունը երաշխավորող ինստիտուտների ամրապնդման, դատական համակարգի, քաղաքացիական ծառայության բարեփոխման և կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացները: Քաղաքական համակարգի բարեփոխման ուղղությամբ կարևոր էին սահմանադրական բարեփոխումները, որոնց շնորհիվ օրենսդրական դաշտն ավելի բարենպաստ դարձավ, բարելավվեցին դատահիրավական համակարգի անկախությունը, մարդու իրավունքների պաշտպանի և ԶԼՄ ազատությունները: Սահմանադրական բարեփոխումներն էական նշանակություն ունեին Հայաստանի քաղաքական համակարգի եվրոպականացման առումով: Բայց և քաղաքական համակարգի հետագա բարելավման համար «անհրաժեշտ է արդյունավետորոն ներդնել օրենսդրությունը, և անհրաժեշտ են հետագա օրենսդրական փոփոխություններ նոր Սահմանադրությանը համապատասխանեցնելու համար»[11]:

Զեկույցում նաև նշված են մարդու իրավունքների պաշտպանի (օմբուդսմեն) դերի ամրապնդմանն ուղղված քայլերը. «Բարեփոխումները հատկապես նկատելի էին գրասենյակի ինստիտուցիոնալ անձեռնմխելիության, մարդու իրավունքների ոտնահարման դեպքերին վերաբերող բողոքների քննությունների անցկացման, գրասենյակի կարողությունների, ինչպես նաև օրենսդրական գործընթացում նրա ներգրավվածության մեջ»[12]: Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի կայունացմանն էլ ավելի նպաստեց 2007 թ. հուլիսին ընդունված նախագահական որոշումը, ըստ որի, ժողովրդավարությանը և մարդու իրավունքներին վերաբերող որևէ օրենքի նախագիծ նախ պետք է պարտադիր փորձաքննության ուղարկվի Պաշտպանի գրասենյակ:

2008 թ. փետրվարին տեղի ունեցած նախագահական ընտրությունները և երկրում ծավալված հետընտրական իրադարձությունները խոչընդոտեցին օրենսդրական դաշտը նոր Սահմանադրությանը համապատասխանեցնելու գործընթացը: Ընտրություններից հետո երկրում առաջացած քաղաքական ճգնաժամը և հատկապես մարտի 1-20-ն ընկած ժամանակահատվածը ոչ միայն խանգարեցին երկրում ընթացող քաղաքական փոխակերպումներին, այլ նաև բացահայտեցին մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում առկա հիմնախնդիրները: Դրա մասին խոսվում է նաև «ԵՀՔ իրականացումը 2008 թ., Առաջընթացի զեկույցում»: Համաձայն զեկույցի, երկրի առջև կանգնած գլխավոր խնդիրներից են ԶԼՄ լիակատար ազատության ապահովումը

---

[10] ԵՀՔ իրականացումը 2007 թվականին, Առաջընթացի զեկույց (www.delarm.-es.europa.eu/arm/press/10_04_2008.htm):

[11] Նույն տեղում:

[12] Նույն տեղում:

և քաղաքական փոխակերպումների տեսանկյունից ընդունված օրենքների ներդրումն ու իրականացումը[13]:

Խնդիրների լուծման առումով կարելի է նշել Հայաստանի իշխանությունների նախաձեռնությունները քաղաքական երկխոսության սկզբունքի կիրառման վերաբերյալ: Հատկապես կարևոր են 2008 թ. ընտրություններից հետո Եվրոմիության տեղեկատվական կենտրոնների բացումը Երևանում, «Երևանում տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մասին» օրենքի ընդունումը, Հանրային խորհրդի ստեղծումը, Ազգային ժողովում եվրոինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի ձևավորումը և այլն: Եվրոպական գործիչները հատկապես դրական են գնահատել Երևանի ավագանու ընտրությունների կազմակերպումը, որը թեև անթերի չէր, բայց գնահատվում է որպես առաջընթաց ընտրական ոլորտում[14]: Թե՛ 2007 թ. և թե՛ 2008 թ. ԵՀՔ առաջընթացի զեկույցներն արձանագրում են երկրում բարեփոխումների դրական շարժընթացը: Հայաստանը կարողացել է, համաձայն ԵՀՔ Գործողությունների ծրագրի, բարեփոխումներ իրականացնել երկրում, հատկապես հարկային և մաքսային, ֆինանսական ծառայությունների և մրցակցային քաղաքականության ոլորտներում: 2009 թ. ընթացքում բարեփոխումները շարունակվեցին, մասնավորապես քաղաքական երկխոսության և մարդու իրավունքների պաշտպանության բարելավման ուղղությամբ: 2009 թ. բարեփոխումների գործընթացը բարդություններ ունեցավ տնտեսական ոլորտում՝ համաշխարհային տնտեսական ճգնաժամի պատճառով:

Հարևանության քաղաքականության գործընթացներին Հայաստանի մասնակցությունը նպաստեց քաղաքական շարժընթացին. քաղաքական կառույցները, հատկապես իշխանական մարմինները, համագործակցելով ԵՄ-ի հետ, ձեռք են բերել բարեփոխումներ կատարելու գիտակցված պատրաստակամություն: Սակայն դա հաճախ պայմանավորված է ոչ միայն ժողովրդավարական սկզբունքներով կազմակերպած կայուն հասարակական կյանք ապահովելու խնդրով, այլև սեփական կարգավիճակը պահպանելու նպատակով: Եթե իշխանական մարմինները ներկայացնող քաղաքական ինստիտուտները կարող են կայացած համարվել, ապա ժողովրդավարության հիմնասյուներից քաղաքական կուսակցությունները նշված գործընթացներում նկատելի առաջխաղացում չեն արձանագրում: Հնարավոր է, որ եվրոինտեգրման հաջորդ փուլերում այս խնդիրը առաջնայնություն ստանա:

Ընդհանուր առմամբ, եվրոինտեգրման գործընթացը Հայաստանում հեռանկարային ու խորքային նշանակություն ունի: Հայաստանի անդամագրումը եվրոպական կառույցներին, մասնակցությունը տարբեր ծրագրերի շրջանակներում նպաստում են երկրի քաղաքական զարգացմանը, քաղաքական փորձի ձեռքբերմանը, բարեփո-

---

[13] ԵՀՔ իրականացումը 2008 թ., Առաջընթացի զեկույց (http://delarm.ec.europa.eu/arm/programmesactions/newregulations.htm):

[14] Տե՛ս www.theneweuropeans.info/ru/home/2008/06/14/armenia

խումների իրականացմանը: Գործընթացը երկարատև բնույթ ունի, և նշված օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով, ոչ մի կառույց չի կարող քաղաքական սկզբունքներ, նորմեր, ժողովրդավարությանը հատուկ արժեքներ պարտադրել որևէ հասարակության: Հայ հասարակությունը, որոշ բացառություններով, եվրոինտեգրման կողմնակից է և սպասումները ապագայի նկատմամբ կապում է դրան:

ПРОЦЕСС ДЕМОКРАТИЗАЦИИ АРМЕНИИ
В РАМКАХ ПОЛИТИКИ ЕВРОПЕЙСКОГО СОСЕДСТВА

МАТЕВОСЯН В. А.

Резюме

Особое значение Политики европейского соседства (ПЕС) для Армении обусловлено учетом интересов и потребностей каждой страны как главного принципа определения приоритетов сотрудничества. Анализ ситуации позволяет утверждать, что благодаря сотрудничеству Армении с ЕС сформировался осознанный подход к необходимости политических реформ и совершенствованию политических институтов. Но в силу отсутствия достаточных внутренних ресурсов и политического опыта далеко не все политические институты и, в частности, политические партии и партийная система завершили процесс формирования. Для Армении сохраняется актуальность динамичной и эффективной евроинтеграции, возможной благодаря партнерским условиям и принципам политического диалога, предлагаемым ПЕС.